



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2012 թվական N 516-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ  
ԱՌԻԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ և 10-րդ կետերը՝ որոշում եմ.

1. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի կազմը.

1) *Վալերիկ Բակլաջյան* - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) *Էլզա Հովհաննիսյան* - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ,

3) *Էմմա Գևորգյան* - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

4) *Կոմիդաս Հունանյան* - քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ